ՀԱՐՑԱՇԱՐ

«Կրթության մասին» ՀՀ օրենք

Հարց 1.

Կրթություն

անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար

(հոդ. 3, մաս 1, կետ 1)

Հարց 2.

Ինֆորմալ կրթություն.

անձի առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և այլ տարբեր գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներ, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամանակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի

(հոդ. 3, մաս 1, կետ 1.5)

Հարց 3.

Նշվածներից ո՞րը մասնագիտական հիմնական կրթական ծրագիր չէ՝

միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ)

(հոդվ. 10, մաս 3)

Հարց 4.

Նշվածներից ո՞րը հանրակրթական հիմնական ծրագիր չէ.

նախնական մասնագիտական (արհեստագործական)

(հոդ. 10, մաս 2)

Հարց 5.
Կրթության բոլոր ձևերի համար նույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է.

միասնական պետական կրթական չափորոշիչը

(հոդ. 12, մաս 2)

Հարց 6.
Միջին և ավագ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմություն առարկաների ուսուցումը.

ավարտվում է գիտելիքների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ

(հոդ. 18, մաս 6)

Հարց 7.
Նշվածները ո՞րը Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան չէ.

ասպիրանտ

(հոդ. 24, մաս 4)

Հարց 8.

Դիպլոմավորված մասնագետ պատրաստող բուհերի մասնագիտությունների ցանկը հաստատում է.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

(հոդ 24, մաս 5)

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք

Հարց 9.
Քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողները.

ա) ենթակա են վերապատրաստման «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով

(հոդվ. 20, մաս 1)

Հարց 10.
Քրեակատարողական ծառայության հանրային ծառայողների հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանում է.

հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը

(հոդվ. 20, մաս 3)

Հարց 11.
Քրեակատարողական ծառայության հանրային ծառայողներն իրավունք ունեն.

սահմանված կարգով կրելու, պահելու և գործադրելու (կիրառելու) հրազեն և օրենքով նախատեսված հատուկ միջոցներ՝ հատուկ ուսուցում անցնելուց հետո

(հոդվ. 20, մաս 3)

<u>ՀՀ քրեակատարողական օրենսգիրք</u>

Հարց 12.
Աշխատանքով ապահովելիս առաջնությունը տրվում է այն դատապարտյալին, ով.

ունի գույքային պարտավորություններ կամ գտնվում է նյութական ծանր վիճակում

(հոդ. 85, մաս 2)

Հարց 13.
Ու՞մ որոշմամբ դատապարտյալն իր համաձայնությամբ առանց վարձատրության կարող է ներգրավվել ուղղիչ հիմնարկի կամ դրան հարող տարածքների բարեկարգման աշխատանքներին.

ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ

(հոդ. 88, մաս 1)

Հարց 14.
Նախնական մասնագիտական կրթությունն անչափահաս դատապարտյալի համար իրականացվում է.

աշխատանքային օրվա տևողության սահմաններում

(հոդվ. 90, մաս 2)

Հարց 15.

Ուղղիչ հիմնարկում դատապարտյալի նախնական մասնագիտական ի՞նչ կրթություն կարող է կազմակերպվել.

արհեստագործական կրթություն

(հոդվ. 90, մաս 1)

Հարց 16.
Դատապարտյալի կրթությունը և մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է.

ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով

(հոդ. 89, մաս 1)

Հարց 17.
Չվարձատրվող աշխատանքներին արգելվում է ներգրավել.

առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ, հղի, կենսաթոշակային տարիքի հասած դատապարտյալին.

(հոդ. 88, մաս 3)